

2022-2023 ուստարվա քիմիա և բնագիտություն առարկաներից կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

ուսուցիչ՝ Ե.Մամարյանի

2022-2023 ուստարվա համար մեթոդիավորման կողմից քննարկվել և հաստատվել է քիմիա և բնագիտություն առարկաների թեմատիկ պլանները, որոնք կազմված են ԿԳՄՄ- ի կողմից հաստատված առարկայական ծրագրերի և չափորոշիչների հիման վրա: Տնօրենությանը ամեն օր ներկայացվել է դասի պլանների առձանագրությունները և հաստատվել :

- 5-րդ և 6-րդ դասարաններում դասավանդել են բնագիտություն, իսկ 7-ից 9-րդ դասարաններում քիմիա առարկաները:
- Դասերին հաճախակի օգտագործվել են դիտակտիկ նյութեր , կատարել փորձեր և լաբորատոր աշխատանքներ՝ դասանյութը ավելի մատչելի և հետաքրքիր դարձնելու համար:
- Կազմվել են թեմատիկ գրավոր աշխատանքների թեստեր 1-ին և 2-րդ կիսամյակների համար, որոնցում առկա է եռամակարդակ մոտեցումը:
- Մասնակցել են մեթոդիավորման կողմից կազմակերպված նիստերին, որոնց ներկայացել են զեկույցներով:
- Առաջին կիսամյակում անց են կացրել բաց դաս 9-րդ դասարանում՝ << Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներ >> թեմայով:
- 9-րդ դասարանի երեք աշակերտներ մասնակցել են քիմիա առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլին :
- Երկրորդ կիսամյակում՝ 8-րդ դասարանի աշակերտների հետ մասնակցել ենք «Հնարավորությունների հարթակ» V դպրոցական գիտահետազոտական գիտաժողովի:
- Վերլուծելով աշակերտների առաջադիմության որակը՝ 1-ին և 2-րդ կիսամյակներում եկա հետևյալ եզրակացության.
 - 5-րդ և 6-րդ դասարանների ուսման որակը 2-րդ կիսամյակում ավելի բարձր է: Աշակերտները ընտելացան առարկային և ուսուցչի պահանջներին:
 - 7-րդ դասարաններում 2-րդ կիսամյակում ուսման որակը որոշ նվազել է:Պատճառն այն է , որ թեմաները այդ տարիքի համար դժվար են յուրացվում:Ըստ նոր չափորոշի այդ թեմաները պետք է անցնեն 8-րդ դասարանում:
 - 8-րդ «բ» դասարանում ուսման որակը 1- ին կիսամյակում 35%, 2-րդ կիսամյակում աճել է մինչև 46 %:Պատճառն այն է, որ աշակերտները դժվարանում են կատարել հաշվարկներ, դասարանում կան շատ թույլ աշակերտներ:Անհրաժեշտ է ավելի շատ համագործակցել մաթեմատիկայի ուսուցիչների հետ և ավելի հաճախակի կատարել դասալսումներ:
- Մասնակցել են նոր ՀՊԶ-ի վերապատրաստմանը :
- Կազմակերպել են արտաժամյա անվճար լրացուցիչ պարապմունքներ քիմիա առարկայի որակի բարձրացման նպատակով::